ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 03

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

խորհրդի նիստի

ք. Աշտարակ **23. 10. 2024թ. ժամը 15^{00}**

Մասնակցում էին՝

Ս. Մովսիսյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետ***
Հ. Գույյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ***
Ա. Գրիգորյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական***
Վ. Հարությունյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական***
Մ. Դատումյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական***
Ա. Մարկոսյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական***

Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Մարզային նշանակության ավտոճանապարհները սպասարկող ընկերությունների տնօրեններ

Մարզի համայնքների ղեկավարներ

Ուժային կառույցի ներկայացուցիչներ

Լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Մարզի համայնքների 2024թ. սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների վերաբերյալ:
2. 2025թ. համայնքներին տրամադրվող համահարթեցման դոտացիաների վերաբերյալ:
3. Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների վերաբերյալ:
4. Պետական և այլ կազմակերպությունների միջոցով իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքի ուսումնասիրությունների վերաբերյալ:
5. Մարզի համայնքներում 2024թ. ամենամյա չօգտագործված արձակուրդների վերաբերյալ:
6. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին:
7. Այլ հարցեր:

Լսեցին՝

1. Մարզի համայնքների 2024թ. սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան/:*

/Ցուցանիշները կցվում են/:

Ն. Գալստյանը տեղեկացրեց, որ սեփական եկամուտների հավաքագրումը 2024 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ, 9 ամսվա պլանային ցուցանիշների նկատմամբ իրականացվել է 69,2%-ով՝ Աշտարակ՝ 93,0%, Շամիրամ՝ 278,0%, Ապարան՝ 87,0%, Ալագյազ՝ 100,0%, Մեծաձոր՝ 119,0%, Արևուտ՝ 75,0%, Թալին՝ 100,0%, Ծաղկահովիտ՝ 63,0%:

Մարզպետ Սերգեյ Մովսիսյանը հանձնարարեց ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյանին համայնքների ղեկավարների աջակցությամբ շարունակական աշխատանքներ տանել, իսկ հավաքագրումը շարունակել նույն մեխանիզմով՝ ապահովելով հավաքագրման պլանավորված ցուցանիշները: Ծաղկահովիտ և Արևուտ համայնքների ղեկավարներին առաջարկվեց հետևողական աշխատանքներ տանել ցածր ցուցանիշները մինչև տարեվերջ բարձրացնելու ուղղությամբ:

2. 2025թ. համայնքներին տրամադրվող համահարթեցման դոտացիաների վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան/:*

Ն. Գալստյանը տեղեկացրեց, որ 2024 թ. համեմատությամբ 2025 թ. դոտացիաներն աճել են 14,8%: Ներկայացրեց տեղեկատվություն ՀՀ համայնքների բյուջեներին «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով դոտացիաներ տրամադրելու նպատակով նախատեսված հատկացումների ընդհանուր բաշխման ծավալի վերաբերյալ՝ ըստ համայնքների. Ալագյազ՝ 221,323.9, Աշտարակ՝ 3,409,345.5, Ապարան՝ 1,112,445.8, Մեծաձոր՝ 50,000.0, Արևուտ՝ 50,000.0, Թալին՝ 2,003,328.4, Ծաղկահովիտ՝ 446,473.6, Շամիրամ՝ 50,000.0: Ընդհանուր ՀՀ Արագածոտնի մարզին հատկացվել է 7,342,917.1 ՀՀ դրամ:

3. Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների վերաբերյալ */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/:*
/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ 2022 թվականին հաստատված Արագածոտնի մարզի 8 համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ընդհանուր 4 017 898 801 ՀՀ դրամ նախնական արժեքով 19 սուբվենցիոն ծրագրերից այս պահին ավարտվել են 17 ծրագրեր, որոնցից Թալին համայնքի Արագածավան և Արտենի բնակավայրերի միջդաշտային ոռոգման համակարգի հիմնանորոգման աշխատանքների մասով ընթանում է ավարտական փաստաթղթերի կազմման գործընթացը: Ընթացքի մեջ են գտնվում Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի թիվ 4 «Հասմիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքները:Տեղեկացվեց, որ կատարվել է ընդհանուր աշխատանքների շուրջ 90%-ը: Ընթացքի մեջ են նաև Ապարան համայնքի Արագած և Շենավան բնակավայրերում նոր մանկապարտեզների կառուցման ծրագրերը: Շենավան բնակավայրում նոր մանկապարտեզի կառուցման աշխատանքները իրականացվել են 90%-ով: Աշխատանքների վերջնաժամկետ է սահմանվել 01.11.2024 թվականը:

2022 թվականին 18 սուբվենցիոն ծրագրերի համար պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորմանը չափը կազմում է 1 810 897 600 դրամ:

2023թ. ՀՀ Արագածոտնի մարզում կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 23 սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթներ: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել 21 ծրագիր: Վերջնական հաստատվել է 20 ծրագիր՝ 6 045 271 911 ՀՀ դրամ արժեքով: Ներկայացվեց տեղեկատվություն 2023 թվականի սուբվենցիոն ծրագրերի մասին ըստ համայնքների և ըստ ուղղությունների:

2024 թվականի ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերից հաստատվել է մարզի 6 համայնքներից ներկայացված 33 սուբվենցիոն ծրագրային հայտ՝ 12 208 736 420 ՀՀ դրամ ընդհանուր նախնական արժեքով /Աշտարակ – 16 ծրագիր, Թալին- 6 ծրագիր, Ապարան- 4 ծրագիր, Ծաղկահովիտ- 2 ծրագիր, Ալագյազ-4 ծրագիր, Արևուտ – 1 ծրագիր/:

Սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացվել է մարզի 6 համայնքների կողմից ներկայացված 23 սուբվենցիայի ամբողջական փաթեթ: Ներկայացված փաթեթներից միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվել են 16 ծրագիր ընդհանուր 10 097 560 426 ՀՀ դրամ արժեքով: Հաստատված ծրագրերից 10-ում աշխատանքները սկսվել են, իսկ 2-ում շուտով կսկսվեն:

ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներից ներկայացրած 2025 թվականի սուբվենցիայի ծրագրերից նախնական հավանության է արժանացել ՀՀ Արագածոտնի մարզի 8 համայնքներից ներկայացված 24 սուբվենցիոն ծրագրային հայտ՝ 10 948 617 767 դրամ ընդհանուր նախնական արժեքով:

Մարզի համայնքներին առաջարկվել է՝ լրամշակման ենթակա հայտերի ու տեխնիկական բնութագրերի լրամշակումից հետո կազմակերպել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների գնման մրցութային գործընթաց և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ու սահմանված ժամկետներում ներկայացնել սուբվենցիայի ամբողջական փաթեթները: Միաժամանակ տեղեկացվել է նաև, որ ներկայացված դիտողությունները հաշվի չառնելու, ինչպես նաև կցվող տեխնիկական բնութագրերին անհամապատասխան մշակված նախագծանախահաշվային փաստաթղթերը չեն դիտարկվելու: Այսօրվա դրությամբ մարզպետի աշխատակազմ սուբվենցիայի ամբողջական փաթեթներ համայնքներից դեռևս չի ներկայացվել:

Մարզպետ Ս. Մովսիսյանը հանձնարարեց քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյանին հետևողական լինել այդ ուղղությամբ տարվող աշխատանքների նկատմամբ, իսկ համայնքի ղեկավարներին առաջարկեց ներկայացնել սուբվենցիոն փաթեթները անհրաժեշտ ժամկետներում:

4. Պետական և այլ կազմակերպությունների միջոցով իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքի ուսումնասիրությունների վերաբերյալ */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ ի կատարումն ՀՀ ՏԿԵ նախարարի հանձնարարականի ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի մասնագետները պարբերաբար այցելում և տեղում ծանոթանում են մարզի տարածքում պետական և այլ կազմակերպությունների միջոցով իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքին: Ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են նախարարություն, իսկ աշխատանքներում հայտնաբերված թերությունների,դանդաղ ընթացքի կամ նկատված խնդիրների մասին տեղեկատվություն է ներկայացվել տվյալ ծրագրի պատվիրատու և բյուջետային գլխավոր կարգադրիչ հանդիսացող մարմիններին:

Տեղեկացվեց,որ վերջին այցելությունների արդյունքում մարզի երեք բժշկական կենտրոններից Աշտարակի ԲԿ-ում շինաշխատանքները ընթանում են նորմալ և թերություններ չեն հայտնաբերվել, սկսվել են հիվանդանոցի հին մասնաշենքի քանդման աշխատանքները, իսկ Թալինի ԲԿ-ում և Ծաղկահովիտի ԱԿ-ում ինչպես նախորդ այցելությունների, այնպես էլ վերջին այցելության ժամանակ, արձանագրվել է, որ շինաշխատանքները ընթանում են շատ դանդաղ և թերություններով, իսկ նախորդ այցերի ժամանակ հայտնաբերված թերությունները

չեն վերացվել: Ալագյազում կառուցվող 144 տեղանոց մոդուլային մանկապարտեզի աշխատանքները ընթանում են նորմալ, իսկ Ալագյազի համայնքային կենտրոնի շինաշխատանքները ավարտվել են: Երկու օբյեկտներում էլ թերություններ չեն հայտնաբերվել:

Ներկայացվեց, որ ճանապարհների հիմնանորոգման աշխատանքները ընթանում են նորմալ, առանց թերությունների, որոշ հատվածներում աշխատանքներն արդեն գտնվում են ավարտական փուլում:

Վերանորոգվում և հիմնանորոգվում են Ուշիի բնակավայրի մանկապարտեզի շենքը, Աշտարակ քաղաքի թիվ 5 ավագ դպրոցը, Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի դպրոցը, Թալին համայնքի Արագածավանի թիվ 1 միջնակարգ դպրոցը, Լուսակն և Գառնահովիտ բնակավայրերի դպրոցները: Տեղեկատվություն ներկայացվեց նաև, որ Փարպի համայնքի 5-րդ դարի Ծիրանավոր եկեղեցու շինարարական աշխատանքները շատ դանդաղ են ընթանում:

Մարզպետը կարևորեց մարզում իրականացվող բոլոր շինարարական աշխատանքների վերահսկման գործընթացը և առաջարկեց համայնքների ղեկավարներին նույնպես ընդգրկվել այդ գործում, հետևել բոլոր աշխատանքների ընթացքին, վեր հանել թերությունները, արձանագրել և ուղարկել մարզպետի աշխատակազմ:

Մարզպետի կողմից անդրադարձ եղավ «Ամբերդ Ամրոց» հուշարձանի տարածքում ընթացող շինարարական աշխատանքներին: Մարզպետը մտահոգություն հայտնեց, որ մեր մարզի համար եզակի պատմամշակութային արժեք համարվող բերդաքաղաք-ամրոցում շինարարությունները պետք է ընթանան հատուկ վերահսկողության ներքո, որպեսզի այն չկորցնի իր պատմական արժեքն ու նշանակությունը: ***Հանձնարարվեց*** խիստ հսկողության տակ պահել ընթացող շինարարական աշխատանքները:

5. Մարզի համայնքներում 2023թ. ամենամյա չօգտագործված արձակուրդների վերաբերյալ */զեկուցող՝ ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Հ. Ասատրյանը զեկուցեց, որ յուրաքանչյուր տարի, ՏԿԵ նախարարի հանձնարարականի համաձայն, մարզպետի աշխատակազմի կողմից ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ համայնքապետարանների աշխատակազմերի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների նախորդ տարիների չօգտագործված ամենամյա արձակուրդները տրամադրելու ուղղությամբ: Նշվեց, որ 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում ամենամյա չօգտագործված արձակուրդների ընդհանուր գումարը կազմել էր 12,172,612 մլն. ՀՀ դրամ: Մարզպետի աշխատակազմի և համայնքների ղեկավարների կատարած աշխատանքների արդյունքում չօգտագործված արձակուրդայինները օգոստոսի 1-ի դրությամբ ամբողջությամբ մարվել է: Աշխատանքներն ամբողջությամբ ավարտել են բոլոր համայնքներում:

Սույն թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ մարզի համայնքներում 2024 թվականի ամենամյա արձակուրդներից չեն օգտվել 268 աշխատակիցներ, որոնց վճարվող գումարի չափը կազմում է 49913171 ՀՀ դրամ:

6. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին */զեկուցող՝ մարզպետի խորհրդական Ա. Գրիգորյան/ :*

/Զեկույցը կցվում է/:

Ա.Գրիգորյանը տեղեկատվություն ներկայացրեց ՀՀ Կառավարության «2021-2026 թվականներին կառուցվող, վերակառուցվող, հիմնանորոգվող 300 դպրոց 500 մանկապարտեզ ծրագրի» շրջանակում իրականացվող աշխատանքների մասին:

Արագածոտնի մարզում կառուցվող 25 դպրոցից 17-ը կառուցման փուլում են, 4-ում շուտով կսկսվեն շինաշխատանքները, իսկ 3 դպրոցներում դեռևս մրցույթներ չեն հայտարարվել:

ՀՀ Արագածոտնի մարզպետի հանձնարարությամբ նախաձեռնվել է Նոր Երզնկայի և Ոսկեհատի դպրոցները 300 դպրոց 500 մանկապարտեզ ծրագրում ներառելու գործընթացը:

ԿԳՄՍ նախարարության ԾԻԳ-ի և Արագածոտնի մարզպետի աշխատակազմի համագործակցությամբ Արագածոտնի մարզի 61 դպրոցներում կհիմնվեն բնագիտական առարկաների լաբորատորիաներ՝ նոր գույքով և լաբորատոր նյութերով հագեցած: 17 դպրոցում լաբորատորիաներ արդեն հիմնվել են, որից 4-ը՝ «Իմ քայլը» հիմնադրամի կողմից: Մնացած 44 դպրոցների լաբորատորիաների հիմնման համար կազմվել է համապատասխան փաստաթղթերի փաթեթներ, հայտարարվել են մրցույթներ՝ ընդհանուր 109 մլն դրամ արժողությամբ: Այս պահի դրությամբ 15 դպրոցում լաբորատորիաների վերանորոգման աշխատանքներն ավարտվել են, 6-ը ավարտական փուլում են, 22-ում վերանորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են, 1-ում աշխատանքները դեռ չեն սկսվել: Վերանորոգված լաբորատորիաները համալրվում են մատակարարների տրամադրած գույքով:

Այլ հարցերի շրջանակում մարզպետ Սերգեյ Մովսիսյանը մարզային նշանակության ավտոճանապարհները սպասարկող ընկերությունների տնօրեններին ***հանձնարարեց*** նախապատրաստվել ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներին: Պատշաճ իրականացնել պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

ՀՀ Արագածոտնի մարզպետի որոշմամբ ստեղծված մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանման աշխատանքների կազմակերպման և վերահսկման հանձնաժողովին ***հանձնարարվեց*** ուսումնասիրել ավտոճանապարհները սպասարկող ընկերությունների տեխնիկական հնարավորությունները, պահեստավորված նյութատեխնիկական բազան և վերահսկողության տակ պահել աշխատանքների պատշաճ կատարումը:

ՀՀ ՆԳՆ պարեկային ծառայության Արագածոտնի մարզի գումարտակի հրամանատարի տեղակալ ***Ա. Խաչատրյանը առաջարկեց*** իր աջակցությունը ավտոճանապարհները սպասարկող ընկերություններին՝ կարևորելով առողջ համագործակցության արդյունքում անվտանգ երթևեկություն ունենալու հանգամանքը:

ՀՀ Արագածոտնի մարզպետ Ս. Մովսիսյանը հիշեցրեց նաև ՀՀ վարչապետի կողմից մարզ կատարած այցի ժամանակ հնչեցրած առաջարկությունը՝ հեծանվային սպորտի զարգացմանն ուղղված հեծանվային վազքուղի կառուցելու վերաբերյալ: Մարզպետն առաջարկեց Ապարան համայնքի ղեկավար Կ. Եղիազարյանին այդ ուղղությամբ աշխատանքներ տանել հեծանվային սպորտի ֆեդերացիայի հետ համատեղ և արդյունքների մասին առաջարկություն ներկայացնել մարզպետի աշխատակազմ:

Ամփոփելով մարզի խորհրդի նիստը՝ մարզպետ Ս. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին համատեղ արդյունավետ աշխատանքի համար:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝

Սերգեյ Մովսիսյան